ՕՇԱԿԱՆԻ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ

ՍՏԵՓԱՆ ԵՍԱՅԱՆ, ԱՐԱՄ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Օշականը Հայաստանի հնագույն բնակավայրերից է։ Այստեղ խաչաձևվում են տարբեր դարաշրջանների մշակույթներ՝ սկսած մ. թ. ա. II հազարամյակից մինչև ուշ միջնադար։ Քասախ գետի երկու ափերին և հատկապես դյուղի կենտրոնում բարձրացող Դիդի-կոնդ բլրի ստորոտում փռված են II—I հազարամյակների բնակավայրեր և դամբարանադաշտեր։ Ուշագրավ են Օշականի բլրի գագաթի գողտրիկ ամրոցից հայտնաբերված (տախտ. I₁) ուրարտական շրջանի նյութերը և դամբարանային հազվագյուտ գտածոները՝։

Վաղ միջնադարյան մի փոքրիկ բնակավայրի հետքեր պահպանվել են Դիդի-կոնդ բլրի գագաթին, ուշ ուրարտական շրջանում կառուցված դղյակ-ամրոցի տեղում[2]։ Ամրոցը մոտ քառորդ հա տարածությամբ, գրեթե քառակուսի հատակագծով մի կառուցվածք է։ Նրա հզոր պարիսպները (հաստությունը՝ 2,65 մ) ամրացված են լրացուցիչ կոնտրֆորսներով, որոնք մինչև 1,0—1,1 մ դուրս են պատերից։

Շինարարական տեխնիկայի առումով բացառիկ հետաքրքրական է ամրոցի քարերի տաշվածքը, որը բնորոշ է ուրարտական շինարարական արվեստին։ Թոփրախ Կալեում (Վան), Արգիշտիխինիլիում, Կարմիր բլուրում, Արմավիրում, Դովրիում և այլ ուրարտական կառույցներում հատվածաբար հանդիպող քարերի ցայտուն ռուստովկան այստեղ զանգվածային բնույթ է կրում։ Այս տեխնիկան, ինչպես նկատվում է, խոր ակունքներ ունենալով ուրարտական հուշարձաններում, իր թարմությունը չի կորցրել նաև աքեմենյան շրջանում և հետագա զարգացում է ապրել հելլենիստական շինարարական արվեստում (Գառնիի ամրոցը)։

Դղյակ-ամրոցը ներքին-տարածական լուծմամբ խիստ ինքնատիպ է, իսկ հատակագծի ձևով առնչվում է ուրարտական ժամանակակիցներ ամրոցների հատակագծերին (Արագած)[3]։ Ամրոցը կենտրոնական՝ հյուսիսից-հարավ ձգվող հաստ միջնորմ-պատով բաժանվում է երկու մասի։ Արևմտյան հատվածում պատերի հետքեր չեն նշմարվում։ Այստեղ ժամանակի ընթացքում լվացվել է ողջ հողաշերտը և տեղ-տեղ երևում են պեմզաքարի հարթակներ—ժայռեր։ Արևելյան թևը բաժանվում է երեք մասի. հյուսիսային կողմում մեծ դահլիճ է, կենտրոնում՝ բլրի ամենաբարձր կետում, նկատվում են

---

[1] С. Есаян, А. Калантарян, Позднеурартское погребение Ошаканского могильника *(«Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 3, էջ 268—275)։*

[2] *ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը 1971—1975 թթ. պեղել է ամրոցի ողջ տարածքը, որի ժամանակ բացվել են պարիսպների ուրվագիծը և ներսի բաժանումները՝ բակով և սենյակներով։ Ամրոցի պարիսպները, ներքին պատերը և սենյակները խիստ ավերված են։*

[3] К. Л. Оганесян, Урартское поселение в селе Арагац *(ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 4, էջ 77—92)։*

IV—V դդ. մատուռի հետքեր, իսկ հարավային կողմում պահպանվել են ուրարտական շրջանի երեք մեծ սենյակների ներքնահարկերը։ Ամրոցի այս հատվածը եղել է երկհարկանի, որն ապացուցվում է տեղում պահպանված ճարտարապետական մնացորդների մանրազնին քննությամբ։



Տախտակ I

Դղյակ-ամրոցում հստակ նկատվում են շինարարական առնվազն երկու ժամանակաշրջաններ։ Ամրոցը էական վերակառուցման է ենթարկվել վաղ միջնադարում։ Այն վերակառուցվել է Ամատունիների տան ներկայացուցիչների կողմից՝ մ. թ. IV—V դդ., երբ Օշականը նրանց տիրույթն էր։ Ամենից շատ փոփոխվել են հարավային հատվածի ուրարտական սենյակները (տախտ. I_2)։ Կենտրոնական մեծ սրահի նկուղը վերածվել է երեք փոքր սենյակների։ Չորրորդ՝ ծայր արևմտյան սենյակը (չափերը՝ 7,15×3,30 մ) արևելյան կողմում կից սենյակի հետ ունի ուրարտական շրջանում շարված կոփածո, խոշոր տուֆե ընդհանուր միջնապատ (տախտ. II_2)։ Հյուսիսային կողմում ուրարտական շարվածքից պահպանվել է 3—4 շարք։ Արևմտյան պատը տեղ-տեղ

շարված է մանր քարերով, իսկ մի մասը պեմզայի ժայռ է, որը տաշված և վերածված է պատի։ Սենյակի հարավ-արևելյան անկյունում բացվեց կրաշաղախե պատերով մի քառանկյունի հոր, որը, հավանաբար, շրամբարի դեր է կատարել։ Սենյակի պեղումների ժամանակ գտնվել են վաղ միջնադարյան կարասներ, սափորների ու կճուճների բեկորներ, ձվածիր կտրվածքով, երկաթե պոչուկավոր նետասլաք։ Բավական շատ են թևավոր խաչերի, կղմինդրների բեկորները, որոնց վրա կան ներկի հետքեր։

Արևմտյան կից սենյակը (№ 5) վատ է պահպանվել (չափերը՝ 7,15×3,05 մ)։ Հարավային կողմում հաղիվ են նշմարվում մանր՝ գերազանցապես հեղքված պեմզաքարով շարված պատի հիմքերը։ Հյուսիսային կողմում ուրարտական շրջանի պատն է, որի մի մասը դրված է ժայռի վրա։ Այս սենյակի հատակի մակարդակը խիստ տարբերվում է 3-րդ և 4-րդ սենյակների հատակներից։ Սրա հատակում 1,0 մ խորությամբ պեմզաքարի ժայռաբեկորներ են, իսկ հայտնաբերված նյութերը՝ հիմնականում կղմինդրների և կոպիտ պատրաստված քրեղանների բեկորներ։

Նշված հարկաբաժնի 6-րդ սենյակը (չափերը՝ 5,50×4,30) տաշված մեծ ժայռաբեկորներով և մուտքով բաժանվում է երկու փոքր մասերի։ Հարավային մասը գրեթե քառակուսի է և հատակը մանր պեմզաքարե և հողե լիցք է (հավանաբար, դրանով հարթեցվել է թեք ռելիեֆը)։ Արևմտյան՝ տուֆե, կոփածո մեծ քարերով պատի տակ կա 0,4 մ բարձրությամբ և 0,70 մ լայնությամբ, քարերով շարված, նստարան։ Հյուսիսային պատը չի միանում հիմնական ուրարտական պատին, այլ դրանից բավական հեռու է և ունի շրջանաձև շարվածք։ Սենյակի պատերը երեք կողմից շարված են պեմզաքարի մանր կտորներով։

Դզյակ-ամրոցի հարավային սենեկաշարն ավարտվում է ուրարտական շրջանում կառուցված, կոփածո, մեծ քարե պատեր ունեցող նեղ սենյակով (№ 7)։ Սրա արևմտյան պատի մի հատվածը պեմզաքարի տաշված ժայռեր են, որոնց մի մասը ժամանակի ընթացքում խիստ հողմահարվել և ճաքել է։ Սենյակի ուրարտական ժամանակաշրջանի հատակագիծն անհայտ է, որովհետև վաղ միջնադարում այն լիովին վերակառուցվել է։ Կենտրոնական նեղ միջնորմով և մուտքով այս սենյակը բաժանվում է երկու մասի։ Հարավային բաժինն իր չափերով պահպանել է նախկին տեսքը, սակայն նրա արևմտյան պատի տակ դարձյալ պատրաստված է քարե նստարան, որը ձգվում է պատի ողջ երկայնքով։ Երկրորդ բաժինը առաջինի համեմատությամբ նեղ է, և պատերն ունեն վաղ միջնադարյան շինարարական արվեստին հատուկ եղևնաձև շարվածք։ Նման շարվածք հանդիպում է Հացավան ամրոցի ժամանակակիցներ շերտերի շինություններում[4], ինչպես նաև Դվինի VIII—IX դդ. կառույցներում[5]։ Արևելյան և արևմտյան պատերի վրա կան փոքրիկ պատուհաններ, որոնք, հավանաբար, արվել են ճրագներ դնելու նպատակով։ Հետաքրքրական է այս մասում բացված, մուտքի մոտից մեկ աստիճան ցած իջնող, փոսորակաձև անցումը, որը շարունակվելով մտնում է դիմացի քարանձավը։ Անշուշտ, սա եղել է հիանալի համալիր՝ բնակելի և տնտեսական բաժանմունքների հետաքրքիր համադրությամբ։ Ցավոք, տեխնիկական պատճառ-

4 Գ. Ա. Տիրացյան, Հացավան ամրոցի 1962 թ. պեղումները (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1963, № 12)։

5 Ա. Ա. Քալանթարյան, Դվին, I, Երևան, 1976, էջ 19, աղ. XIV₂։

Տախտակ II

ներով, մեզ չհաջողվեց պեղել քարանձավը, որը կարող էր հետաքրքիր նյութեր տրամադրել։

Յոթերորդ սենյակից գտնված նյութական մշակույթի մնացորդները խիստ միատարր են։ Հիմնականում հայտնաբերվել են տնտեսական օգտագործման հասարակ անոթների բեկորներ, որոնք թվագրվում են V—VII դդ.։

Դղյակ-ամրոցի արևմտյան թևի հարավային թեք մասում, շինարարական տարբեր շրջանների առկայության պայմաններում, պեղավայրը խիստ խճող-

ված է։ Օշականի տարեց մարդկանց վկայությամբ, այստեղ դեռևս դարասկզբներին հետախուզական աշխատանքներ է կատարել Խաչիկ վարդապետ Դադյանը[6], որի պեղումների հետքերը մինչև օրս նկատելի են։

Այդ մասում բացված երկու սենյակները իրար վրա էին։ Վերին սենյակը, որը կառուցվել է IV—V դդ., ոչ մի ընդհանրություն չունի ուրարտական ամրոցի ընդհանուր հատակագծի հետ։ Այն մի կողմով նստած է եղել հարավային պարսպի արևմտյան հատվածի վրա և նույնիսկ դուրս է եկել դղյակի սահմաններից։ Պատերը շարված են համեմատաբար փոքր, միանման տուֆով։ Սենյակը եղել է սյունազարդ (տեղում պահպանվել է փայտե սյան փոքր խարիսխներից մեկը), ունեցել է կավով սվաղված ամուր հատակ։ Արևմտյան մասում բացվել է կոփածո քարերով, կիսակլոր, բավական հաստ պատ։ Նկարագրվող սենյակը, որից միայն մի փոքր հատված է պահպանվել, օգտագործվել է տնտեսական նպատակներով։ Նրա կենտրոնում, անմիջապես ուրարտական ամրոցի պարսպի մեջ, բացվեց մի մեծ հոր, որտեղից գտնվեցին ցորենի, գարու և սորգոյի մնացորդներ[7]։ Այս սենյակին կից բացվեցին մեկ այլ փոքր շինության մնացորդներ։ Վերջինիս հատակը 0,5 մ ցածր է նախորդից, իսկ արևելյան մասը շարված է մանր քարերով, կիսաշրջանաձև։ Սենյակի հատակը ավերվել է Խ. Դադյանի պեղումների ժամանակ։

Նույն տեղում, մոտ 3,0 մ խորության վրա, բացվեց երրորդ հատակը, որը ուրարտական շրջանի է։ Ելնելով սենյակի փոքրությունից և խորությունից, կարելի էր ենթադրել, որ այն գաղտնուղի է եղել, սակայն այդ ենթադրությունը բացառվեց մանրազնին քննությամբ, քանի որ սենյակի հիմնապատերը դրված են ոչ կայուն հիմքերի վրա։

Ամատունիների շրջանում դղյակի ամենաբարձր մասում կառուցվել է մի փոքրիկ մատուռ, որից պահպանվել են միայն հիմնապատերը։ Այն ուղղանկյուն բեմով փոքրիկ ուղղանկյուն սրահ է (չափերը՝ 7,90×5,35 մ)։ Մատուռի դիրքը արևելքից-արևմուտք մի փոքր խախտված է, որի պատճառը տեղի ռելիեֆը և արդեն առկա ուրարտական շինություններն են (տախտ. II_1)։

Մատուռի ներսից և շրջակայքից գտնված նյութերը վկայում են, որ այն ունեցել է բավական հարուստ հարդարանք և պատերը շարված են եղել կանոնավոր տաշված տուֆով։ Վերջիններիս մեծ մասը հետագայում՝ ուշ միջնադարում, օգտագործվել են մեկ այլ մատուռի շինարարության ժամանակ, որը ներկայումս կանգուն է (առանց ծածկի)։ Նորակառույց մատուռի պատերի մեջ կան վաղ միջնադարյան քիվեր, շուշանազարդով քարեր։ Գտնվել են նաև մեծ քանակությամբ թևավոր խաչերի բեկորներ (մի մասը զարդարուն), սրանք նույնպես եղել են վաղ միջնադարյան մատուռի հարդարանքի մասերը։ Մատուռի մուտքը արևմտյան կողմից է։ Այս փոքրիկ շինությունը եղել է թաղակապ։ Մատուռին անմիջապես կից հարավային սենյակների պեղումների ժամանակ, № 3 և № 4 սենյակներում, գտնվեցին պեմզայից տաշված թաղի յոթ քարեր, որոնցից մեկի վրա կան խաչի գծազարդեր։ Մատուռն

---

6 Ականատեսների վկայությամբ, Խաչիկ Դադյանը պեղումներ է կատարել նաև ամրոցի դամբարանադաշտում։ Սակայն այդ նյութերը հրապարակված չեն և նրա գրառումներում չկան։ Ենթադրվում է, որ 20-ական թվականներին դրանք Էջմիածնի թանգարանից բերվել են Հայաստանի պատմության պետական թանգարան։

7 Հացահատիկը որոշել է գյուղատնտեսական ինստիտուտի պրոֆ. Պ. Ա. Ղանդիլյանը։

ունեցել է կղմինդրե ծածկ։ Նմանօրինակ ծածկը վաղ միջնադարում նորություն չէր և գրեթե պարտադիր էր բոլոր պաշտամունքային շինություններին։

Վաղ միջնադարում մասամբ վերաշարվել են ամրոցի պատերը։ Պարիսպների հարավ-արևելյան և հյուսիսային հատվածներում կան վերակառուցման հետքեր։ Պարսպի ստորին շարքերը, որոնք ստույգ նախնական շինությանն են պատկանում, տաշված են մեծ հմտությամբ և ունեն հիանալի ռուստովկա։ Վերին մասերի շարվածքում նկատելի են շեղումներ (քարերն



Տախտակ III

ավելի մանրանում են, տաշվածքը կոպտանում, իսկ պարսպի հաստությունը պակասում է)։ Փոփոխություններ են կատարվել նաև ամրոցի արևմտյան պարսպի հատվածում, ենթադրյալ մուտքի շրջանում։ Այստեղ պատահականորեն բացվեց մի խոր հոր, որի միջից գտնվեցին կղմինդրի և սափորների բեկորներ։ Հորը փորված է պարսպապատից դուրս և նրա հատակին, 1,5 մ խորության վրա, նկատվում են ուրարտական շրջանի պարսպի հիմնաքարերը։

Դիդի-կոնդ ամրոցի V—VII դդ. կառույցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջնադարում ուրարտական ամրոցի տարածքում գոյություն է ունեցել առանց պաշտպանական ամրությունների բնակավայր, որն իր տարածությամբ գերազանցել է նախորդին՝ դուրս գալով պարիսպների սահմանագծից։

Դիդի-կոնդ ամրոցի պեղումների ժամանակ գտնված նյութական մշակույթի մնացորդները սակավաթիվ են։ Հայտնաբերված նյութերից հիմնականը խեցեղենն է (առավելապես վաղ միջնադարյան), որը ներկայացված է տարբեր տեսակի կարասների, կճուճների, սափորների, թասերի և այլ անոթների բեկորներով, շինարարական խեցեղենի բազմաթիվ մնացորդներով։ Պեղումների ընթացքում շատ են գտնվել հավասարաթև քարե խաչերի քանդակազարդ բեկորներ (տախտ. III)։ Երկաթյա միակ իրը պոչուկավոր նետասլաքն է (տախտ. V_8)։

Ժամանակագրական առումով այս նյութերը բաժանվում են երեք խմբի՝ ա) ուշ ուրարտական և վաղ հայկական՝ մ. թ. ա. VII—VI դդ., բ) IV—VII դդ., գ) XI—XIII դդ.։

XI—XIII դդ. նյութերը քիչ են և հիմնականում գտնվել են ուշ շրջանում կառուցված մատուռին կից 2-րդ սենյակից։ Դրանք ջնարակած, միագույն, կանաչ անոթների բեկորներ, աղամաններ և տվյալ ժամանակաշրջանի համար բնորոշ՝ ծալված կանթերով մի քանի կճուճների մնացորդներ են։ Քանի որ հիշյալ շրջանում բնակավայրն այլևս գոյություն չի ունեցել, ուստի նշված նյութերը Դիդի-կոնդ են բերվել ուխտագնացների միջոցով։

Ուրարտական և վաղ հայկական նյութեր հազվադեպ հանդիպում են երկրորդ սենյակում և ամրոցի արևմտյան պարսպից ներս պեղված փոքր տարածությունում։ Բնակավայրի տարբեր սենյակներից գտնված հնագիտական նյութերի մեծ մասը պատկանում է վաղ միջնադարյան մշակույթին, հատկապես խեցեգործության արհեստին։ Այն իր ուղղակի զուգահեռներն ունի հայկական վաղ միջնադարյան այլ բնակավայրերից գտնված նույնատիպ նյութերում։ Օշականի բնակավայրից հայտնաբերված նյութերը տակավաթիվ լինելով հանդերձ, արտացոլում են վաղ միջնադարյան մշակույթի հիմնական գծերը։ Հիշյալ ժամանակաշրջանի նյութեր գտնվում են ամրոցի ողջ տարածքից, պեղված բոլոր սենյակներից։ Այդ շերտը 3-րդ, 4-րդ և 7-րդ սենյակներում պահպանվել է մինչև մեկ մետր խորությամբ։

Օշականի վաղ միջնադարյան խեցեղենը, ըստ կիրառության, բաժանվում է մի քանի խմբերի։

Կարասներ—Սրանք միջակ մեծության անոթներ են և աչքի են ընկնում պրոֆիլավորված պսակներով (լայնությունը՝ 4—7 սմ)։ Վերջիններս հարթ են, ուղիղ կտրված և անմիջապես միանում են կարասի իրանին։ Կարասները վզեր չունեն, որը բնորոշ է V—VII դդ. համանման անոթներին։ Պսակներն իրենց ստորին մասերում ունեն Մինգեչաուրից հայտնաբերված ժամանակակիցներ կարասների հարդարանքին[8] խիստ նման, ալիքաձև ներճկված զարդեր։ Կարասների մի մասի պսակների անցումները մոտենում են Այգեհանից հայտնի ձևերին, որոնք գտնվել են V—VII դդ. շերտերում[9]։

Օշականի կարասների արտաքին հարդարանքը նույնպես բնորոշ է վաղ միջնադարյան խեցեգործության այդ մասնաճյուղին։ Այստեղ առաջին հերթին աչքի է զարնում շատ տարածված եղևնաձև զարդը, որը լայնորեն հան-

---

[8] Р. М. Ваһидов, Минкәчевир III—VIII әсрләрдә, Бакы, 1961, աղ. III, էջ 37։

[9] 1975—1976 թթ. նյութերը պահվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում։



Տախտակ IV

դիպում է հայկական հուշարձանների վաղ միջնադարյան շերտերում՝ Հացավանում[10], Դվինում[11], Այգեհանում և այլուր։ Տարածված են նաև ներճկված բլթակներով, ինչպես նաև փորագիր, ստորակետաձև զարդերով ուռուցիկ գո-

10 Գ. Տիրացյան, նշվ. աշխ.։

11 Ա. Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ., Երևան, 1970, աղ. XXV₁։

տիները։ Կարասներից մեկի պսակի վրա փորագրված է խաչ, իսկ մեկ այլ բեկորի վրա, հատակից քիչ վերև, արված է վերադիր կլոր ուռուցիկ օղակ (տախտ. IV₄, 8, 9)։



Տախտակ V

Կնուճներ—Պեղումներից հայտնաբերված խեցեղեն նյութերի մեջ մեծ թիվ են կազմում տարբեր կճուճների բեկորները։ Դրանք հիմնականում խոհանոցային մրապատ անոթներ են, մի մասը կոպիտ կառուցվածքով։ Կան առանձին բեկորներ, որոնք պատրաստված են մանրահատիկ դեղնավուն կավից՝ դուրգի վրա և հիանալի մշակված ու փայլեցված են (տախտ. IV₁, 5, 7)։

Օշականի կճուճների եզրագծված մասերը և զարդաձևերը խիստ բնորոշ են վաղ միջնադարին։ Այստեղ հանդիպում են պսակների գրեթե բոլոր ձևերը, որոնք մեզ հայտնի են նաև Հայաստանի այլ հուշարձանների V—VII դդ. շերտերից (տախտ. $IV_{12, 14}$)։ Կճուճները լայնաբերան են և ունեն դուրս փռված պսակներ։ Որպես կանոն այդ պսակների վրայով շուրջանակի անցնում են տարբեր ձևերով ակոսներ։ Նման ակոսավոր պսակներ մեծ քանակությամբ հանդիպում են Դվինի կենտրոնական թաղամասում[12], Այգեհանում։ Հետևաբար, պսակով կճուճները պատկանում են V—VII դդ., քանի որ հետագա դարերի խեցեղեն նյութերում դրանք չկան։ Երբեմն կճուճների պսակները ակոսներ ունեն ներսից, որը, հավանաբար, ավելի վաղ ժամանակաշրջանի ձև է և հայտնի է Արտաշատի III—IV դդ. շերտերից։ Ակոսավոր պսակներով միջին չափի կճուճների հիանալի բեկորներ գտնվել են 4-րդ սենյակից։ Այդպիսի կճուճներ օգտագործվել են միայն վաղ միջնադարում։

Հետաքրքիր են 3-րդ սենյակի վերին շերտերում հայտնաբերված կճուճների բեկորները։ Դրանց պսակները մեծ մասամբ կլորավուն են, իսկ մի մասը կտրվածքում՝ սլաքաձև։ Երկրորդ սենյակից հայտնաբերված նյութերի մեջ կան ակոսավոր պսակներով, ստորին մասում զարդերով բեկորներ (տախտ. IV_3)։ Այս կճուճների արտաքին հարդարանքը շատ պարզ է. դրանք հիմնականում մանր ակոսներ, ալիքաձև գծերով, ստորակետանման փորագիր զարդեր են։ Դեղնավուն բեկորներից մեկի վրա թույլ նկատելի է եղևնազարդը։ 2579/16 փոքրիկ կճուճն իր ձևով քիչ տարբերվում է մյուսներից։ Այստեղ մենք ունենք փոքր, դուրս փռված պսակ, առանց վզի ուղիղ իջնող պատեր, որոնք ստորին մասում կտրուկ թեքվում են դեպի նստուկը։ Կճուճը մրապատ է, պսակի տակով անցնում է ակոսազարդ, իրանի վրա կա ինչ-որ վերադիր նշան, որի նշանակությունն անհայտ է (տախտ. IV_2)։ 1974 թ. 2-րդ սենյակից գտնված կճուճներից մեկի բեկորի վրա առկա է հռոմեական թվանշաններ հիշեցնող (IIX) մի զարդ (տախտ. IV_{10})։ Հայտնաբերված կճուճների կանթերը կտրվածքում նշաձև են, վերին մասում անմիջապես միանում են պսակին, իսկ ստորին մասով հենվում անոթի ուսին։ Հանդիպում են նաև անմիջապես պսակի վրա ամրացված հորիզոնական կանթեր (2-րդ սենյակ)։ Վերջիններս բնորոշ են ավելի ուշ շրջանին (VII դ.)։

Սափորներ—Օշականից հայտնաբերվել են սափորների միայն բեկորներ և մեծ թվով կանթեր։ Սափորներն աչքի են ընկնում լավ մշակմամբ, բոլորն էլ պատրաստված են դուրգի վրա և ունեն շատ թույլ կարմիր ու դեղնավուն փայլ։ Դրանց մեծ մասը նեղվիզ է, թեև հանդիպում են նաև եռատերև բերանով բեկորներ (տախտ. $V_{4, 16}$)։ Սափորները հարդարված են սանրի միջոցով արվող ուղիղ և ալիքաձև զարդերով, նրանց վրա կան նաև փորագիր կետազարդեր և ուռուցիկ շրջանաձև թմբեր։ Իրենց զարգաձևերով և շուրթերի ձևավորմամբ Օշականի սափորները աղերսվում են Դվինի նույն ժամանակաշրջանի նյութերի հետ։ Պսակների մի մասը սրածայր է, կան նաև արտաքուստ շուրջանակի գնացող, նեղ ակոսով տափակ պսակներ։

Հետաքրքիր են սափորների կանթերի ձևերը։ Դրանք կլոր ու նշաձև կտրվածքով են և վերին մասում պարտադիր միացված են պսակին։ Կանթերի

---

12 Ա. Ա. Քալանթարյան, Դվինի կենտրոնական թաղամասի 1971—1973 թթ. պեղումները (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1975, № 7, էջ 96, աղ. III_{6-9})։

մի մասը մշակման տեխնիկայով մոտենում է ուշ անտիկ շրջանի սափորների կանթերի մշակմանը և կրում է լայն ակոսներ։ Հարավային պարսպի տակ գտնված տափակ կտրվածքով երկարավուն կանթը պատկանել է կարմիր, փայլեցրած, շքեղ հարդարանքով անոթի, որն իր մշակմամբ խիստ մոտենում է անտիկ անոթների ձևերին (տախտ. V_{15})։ Կանթերից մեկի վրա պահպանվել է հունական «օմեգա» տառի նման նշան (տախտ. V_{19})։

Թասեր—Սրանք հիմնականում երկու տեսակ են. մեծ, հաստապատ և փոքր՝ մանրահատիկ կավից պատրաստված (տախտ. $V_{1-3, 5-7, 9-14}$)։ Մեծ թասերն ունեն ներս ճկված հարթ պսակներ և պատրաստված են խոշորահատիկ կավից։ Դատելով գտնված բեկորներից, այդ թասերն եղել են խորը և ունեցել են գրեթե ուղիղ պատեր։

Բավական շատ են դուրգի վրա պատրաստված փոքր թասերի բեկորները։ Դրանց պսակները կլոր են, իսկ երբեմն սուր եզրերով։ Որպես կանոն, գրեթե բոլոր թասերը արտաքուստ, պսակից քիչ ներքև, ունեն ակոսներ, որը, հավանաբար, բնորոշ է եղել այդ շրջանի արտադրանքին։ Թասերն իրենց ձևերով խիստ մոտենում են անտիկ շրջանի նույնանման ձևերին և դրանց օրգանական շարունակությունն են կազմում։ Անտիկ շրջանի խեցեգործության ազդեցությունը նկատելի է ոչ միայն անոթների ձևերում, այլև արտաքին հարդարանքում։ Թասերի մեծ մասը պատած է տարբեր գույնի անգոբով և փայլեցված է։ Արտաքին հարդարման այս տեխնիկան, որն, անշուշտ, նախորդ դարաշրջանի արտադրության արգասիք է, գրեթե չի հանդիպում Դվինի վաղ միջնադարյան շերտերի նույնանման անոթների հարդարանքում։ Հավանաբար, դա կարելի է բացատրել արտադրության մեջ տիրող լոկալ երևույթներով։ Ինչպես հայտնի է, Գառնիից նույնպես հայտնաբերվել են անգոբով պատված և փայլեցված մեծ քանակությամբ անոթներ (թասեր, սափորներ և այլն)։ Օշականի թասերի ունեցած աղերսներն անտիկ խեցեղենի հետ նկատվում է նաև պահպանված հատակների ձևերում։ Այդ հատակներն ունեն բարձր օղակաձև ոտքեր (տրամագիծը՝ 4,5—6,5 սմ) և բավական մոտ են Արտաշատի VIII բլրից գտնված և I—II դդ. թվագրվող թասերի ոտքերին[13] (տախտ. $V_{17, 20}$)։

Դղյակ-ամրոցից գտնված խեցեղեն նյութերի մեջ կան կոպիտ պատրաստված փոքր խփերի մի քանի բեկորներ։ Դրանցից մեկը (2580/8, տրամագիծը՝ 20 սմ) եզրերին ունի փորագիր զարդեր, իսկ վերին մասում՝ խաչաձև ակոսներ, բարձր բռնակը կոտրված է (տախտ. IV_{13})։ Մյուս խուփը (2579/5) կարմիր փայլեցված է։ Երկուսն էլ պատրաստված են ձեռքով, խոշորահատիկ կավից։

Հարավային պարսպի տակից գտնվել է քառակող, հաստ պատերով, ներսում այրվածքի պարզ հետքերով փոքր անոթի բեկոր (տախտ. V_{18})։ Հավանաբար, այն փոքրիկ հալոց է եղել։ Ուշագրավ է 1974 թ. 8-րդ սենյակից գտնված կանթով և անցքով ձձումի բեկորը (տախտ. IV_{15})։

Ամրոցի ծածկի կղմինդրները սփռված են նրա ողջ տարածքում, սակայն դրանք գերազանցապես դուրս են գալիս 3-րդ և 4-րդ սենյակներից և բլրի գագաթին տեղադրված հին մատուռի ավերակների շրջակայքից՝ թևավոր խա-

---

13 Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Գ. Կանեցյան, Արտաշատի VIII բլրի շերտագրությունը (ՀՍԱՀ ԳԱ «Լրաբեր», 1974, № 9, տախտ. 2-րդ)։

չեբի բեկորների հետ մեկաեղ։ Կղմինդրները երկու տեսակ են՝ հարթ և կիսաբոլոր։ Հարթ կղմինդրներն իրենց չափերով մեծ են և տարբերվում են Դվինի, Զվարթնոցի, Աշտարակի Կարմրավոր եկեղեցու VII դ. կղմինդրներից։ Հարթ կղմինդրները պատված են սպիտակ և կարմիր անդրբով, ներսից ունեն ալիքաձև ակոսներ։ Կիսաբոլոր կղմինդրները բավական փռված են։ Օշականի կղմինդրները հնաոճ են և ուղղակիորեն կապվում են Դվինի V—VI դդ. շերտերում գտնվածների հետ։ Կղմինդրները ծածկին ամրացվել են կրաշաղախով, որոնց հետքերը պահպանվել են բեկորների վրա։

Ամրոցից գտնված քարե առարկաները շատ քիչ են։ Հայտնի են քարե միխցան, երկանքի վերին քարի դաբդանախշերով և անցքով բեկորներ, իլիկի փոքր դլուխ, ինչպես նաև՝ պեմզաքարից երկու կոկիչներ։

Հայաստանում գտնված ջնարակած անոթների վաղ տեսակների մասին տեղեկությունները վերջին շրջանում բավական ընդարձակվել են։ Եթե նախկինում վերոհիշյալ անոթների դյուտերը հաստակենա էին, ապա ներկայումս դրանք բավական շատ են Այգեանի, Արտաշատի, Արմավիրի, Դվինի, Օշականի և այլ հուշարձաններից գտնված նյութերում։ Վաղ ջնարակած անոթները դերաղանցապես պատրաստված են կաոլինի հումքի վրա, այսինքն՝ դրանք հախճապակու վաղ տեսակներ են։

Դիդի-կոնդի դղյակ-ամրոցի վաղ միջնադարյան շերտերից գտնված ջնարակած անոթների բեկորներն իրենց մշակման տեխնիկայով ընդհանուր դծեր ունենալով վաղ շրջանի նյութերի հետ (Արտաշատ, Արմավիր), միաժամանակ տարբերվում են նրանցից։ Անոթները պատրաստված են մանրահատիկ կավից, ունեն կարմիր ու դեղնավուն երանգ։ Բեկորները դրսից և ներսից պատված են կապտա-կանաչավուն ջնարակով։ Ջնարակված անոթների հիշյալ բեկորները, անկասկած, տեղական արտադրանք են, իրենց գույնով ու կավի որակով մոտ են Դվինի V դ. կաթողիկոսարանի հատակից գտնված նուրնատիպ անոթների բեկորներին[14] և թվագրվում են նույն ժամանակաշրջանով։ Անհավանական չպետք է համարել այն փաստը, որ դրանք Օշական կարող են բերված լինել Դվինից։

Օշականի պեղումները կարևոր նշանակություն ունեն Հայաստանի վաղ միջնադարյան ժամանակաշրջանի նյութական մշակույթի ուսումնասիրության համար։ Պեղածո նյութերը ցույց են տալիս, որ Օշականը սերտ կապի մեջ է եղել Արարատյան դաշտի ժամանակակիցների մշակութային և տնտեսական խոշոր կենտրոնների հետ և ժամանակագրական առումով մշակութային միևնույն խմբին է պատկանել։

РАННЕСРЕДНЕВЕКОВОЕ ПОСЕЛЕНИЕ В ОШАКАНЕ

СТЕПАН ЕСАЯН, АРАМ КАЛАНТАРЯН

Резюме

Селение Ошакан (Аштаракский район, Арм. ССР) известно своими историко-археологическими памятниками, датируемыми II тыс. до н. э.— до позднего средневековья.

---

14 Ա. Ա. Քալանթարյան, նշվ. աշխ.։

В 1971—1975 гг. экспедицией Института археологии и этнографии АН Арм. ССР на холме Диди-конд, возвышающемся в центре села, раскопано раннесредневековое поселение. Поселение сооружено на месте позднеурартской крепости, при строительстве которого использованы и частично перестроены древние сооружения.

При раскопках были обнаружены постройки культового и светского назначения, керамика, оружие, черепицы, фрагменты каменных крестов и т. д. Поселение датируется IV—VII вв. н. э.